

ԹԻՎ 28 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1-Ա

30 հունվարի 2024թ.

ք.Նոր Հաճըն

**«ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 22.01.2024թ. N 02-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԹԱՓՈՒՐ ՄԱՆԴԱՏԸ «ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ»**

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ
ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

2024 թվականի հունվարի 23-ին թիվ 28 ԸԸՀ է ստացվել Նոր Հաճընի համայնքապետարանից թիվ 180 գրությունը, որին կցված է եղել 22.01.2024թ. «Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամ Վարդան Պապյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» թիվ 02-Ա որոշումը: Դեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով, 2024թ. հունվարի 30-ին, ժամը 16.00-ին թիվ 28 ԸԸՀ-ն նշանակել է արտահերթ նիստ «Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամ ընտրված և լիազորությունները դադարած ավագանու անդամի մանդատը «Վարդան Պապյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին տալու արձանագրություն կազմելու» օրակարգով: 2024թ. հունվարի 30-ին ժամը 10:30-ին՝ Վարդան Պապյանը ներկայացրել է դիմում, որով տեղեկացրել է, որ դիմել է Վարչական դատարան Նոր Հաճըն համայնքի ավագանու 22.01.2024թ. թիվ 02-Ա որոշումը վերացնելու պահանջով: Թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է datalex.am պաշտոնական կայքէջը և պարզել, որ ՎԴ/0789/05/24 դատական գործով հայցվոր է Վարդան Պապյանը 25.01.2024թ. ներկայացրել է հայցադիմում՝ Նոր Հաճըն համայնքի ավագանու 22.01.2024թ. թիվ 02-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: 30.01.2024թ. ժամը 16:00-ին կայացած թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստին թիվ 28 ԸԸՀ է ներկայացվել ՎԴ/0789/05/24 դատական գործով կայացված Վարչական դատարանի 30.01.2024թ. «Հայցադիմումը վարույթ ընդունելու, վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը քննարկելու, գործն ընդհանուր կանոններով քննելու և ապացույց պահանջելու մասին» որոշումը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ նույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերով սահմանված դեպքերի:

Հիմք ընդունելով վերոգրյալըն ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որի համաձայն՝ «1.Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.», թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. «Նոր Հաճրն համայնքի ավագանու անդամ Վարդան Պապյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» 22.01.2024թ. N 02-Ա որոշման հիման վրա թափուր մանդատը «Վարդան Պապյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին տալու վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

**ԹԻՎ 28 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Վ.ԳԱԼՈՅԱՆ